ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել Ազգային ժողովի ութերորդ գումարման մշտական հանձնաժողովների հերթական նիստերի գումարման օրերի հետևյալ ժամկետացանկը.

1) աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը՝ ժամը 12:00-ին.

2) առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 12:00-ին.

3) արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 14:00-ին.

4) գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը՝ ժամը 14:00-ին.

5) եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը՝ ժամը 15:00-ին.

6) մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երկուշաբթի օրը՝ ժամը 14:00-ին.

7) պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երկուշաբթի օրը՝ ժամը 12:00-ին.

8) պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին.

9) տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երկուշաբթի օրը՝ ժամը 15:00-ին.

10) տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 15:00-ին.

11) տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին.

12) ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա երկուշաբթի օրը ՝ ժամը 10:00-ին:

2. Ազգային ժողովի խորհրդի 2019 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման մշտական հանձնաժողովների հերթական նիստերի գումարման օրերի ժամկետացանկը սահմանելու մասին» ԱԺԽՈ-003-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2021 թվական, օգոստոսի 30
Երևան
ԱԺԽՈ-002-Լ